ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Տեղական ինքնակառավարման օրվա առթիվ

10.11.2019

Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի գործընկերներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ:

Ձեր գործունեության 23 տարիների ընթացքում դուք հասցրել եք ուրույն դերակատարում ունենալ պետության կառավարման համակարգում՝ ձեր կարևոր լուման ներդնելով պետականաշինության գործում: Պետությունն էլ իր հերթին այսօր անում է հնարավորը՝ կայացած և համաչափ զարգացող համայնքներ ունենալու համար: Քանզի ապացուցված է, որ յուրաքանչյուր պետություն ուժեղ է հատկապես իր տեղական ինքնակառավարման մարմիններով, որոնց զարգացվածությունն ու կազմակերպվածությունը մեծ նշանակություն ունի երկրի կայունության գործում:

Տեղական ինքնակառավարման համակարգի հարգելի գործընկերներ, շարունակեք ձեր ամենօրյա պատասխանատու և սրտացավ աշխատանքով նպաստել համայնքների առաջընթացին ուղղված պետական քաղաքականության իրականացմանը: Եվ մի բանում համոզված եղեք, որ ձեր գործունեությամբ մասնակցում եք պետության վարկանիշի ձևավորմանը, քանի որ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատանքի գնահատականի մեջ համայնքի բնակիչն ամփոփում է ողջ պետական համակարգի աշխատանքը:

Հարգելիներս, վերստին շնորհավորելով բոլորիդ այս տոնական օրվա առթիվ՝ մաղթում եմ նպատակասլացություն, հաստատակամություն և շարունակական առաջընթաց՝ հանուն ավելի բարեկեցիկ հասարակության, ավելի ուժեղ համայնքի ու պետության: